Մետալուրգիական լաբորատորիան՝ արդյունքի գիտական բանալին
ստորաբաժանում, որտեղ համատեղվում են գիտությունն ու արտադրությանը:

09

Ուսուցիչը՝ սահմանին
«Ուզում եմ, որ աշակերտները տեսնեն սկզբունքային, երիտասարդ, ուժեղ ու ժամանակակից ուսուցչի կերպար» - Տարոն Մարգարյան

06

Փորձագետ Կիրստեն Հանդ
ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման ուղղությամբ զգալի առաջընթաց կա

10

ԸՆԴԵՐՔԻՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ

ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ

ԶՊՄԿ-ում շրջայցերը շարունակվում են

04

ՆԵՐՈՒԺ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

Հոկտեմբերի 3-4-ը կայացավ Հայաստանի հանքարդյունաբերական երկրորդ ֆորումը, որին մասնակցում էին Կառավարության, հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչներ, տեղական և միջազգային մասնագետներ, ներդրողներ և բազմաթիվ հեղինակավոր փորձագետներ:

Հանքարդյունաբերությունն ու վերականգնվող էներգետիկան, որոնք

ԶՊՄԿ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ **Վարդան Ջհանյան**

անընդմեջ ընդգրկված էին Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումի առանցքային թեմաների շարքում:

«Հայաստանի ներուժն ահռելի է»

Հայաստանի հանքարդյունաբերողների և մետալուրգների ասոցիացիայի նախագահ, Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ջհանյանը ֆորումի ընթացքում շեշտեց.

«Հայաստանի ներուժն ահռելի է ինչպես հանքարդյունաբերության, այնպես էլ վերականգնվող էներգետիկայի ոլորտներում: Պղնձի, մոլիբդենի և ոսկու պահանջարկը միայն աճելու է: Ըստ կանխատեսումների՝ պղինձը նշանակությամբ կգերազանցի նույնիսկ նավթին»:

Նրա խոսքով, աշխարհում տնտեսական տեղաշարժ է ընթանում՝ նավթի դարաշրջանից դեպի պղնձի դարաշրջան: Սա նոր հնարավորություններ է բացում հայկական պղնձի և մոլիբդենի արդյունահանման ոլորտում:

«Միայն այս երեք մետաղների՝ պղնձի, մոլիբդենի և ոսկու հաշվին, առաջիկա տարիներին Հայաստանը կարող է ունենալ 3 մլրդ դոլարից ավելի արտահանում», – ընդգծում է Ջհանյանը:

Նա նաև հիշեցնում է՝ համաշխարհային գերտերությունները, այդ թվում՝ ԱՄՆ-ն, նույնպես պղնձի խտանյութ արտահանելով փորձում են բարելավել արտաքին առևտրի հաշվեկշիռը:

«Մեզ մնում է խելամտորեն օգտագործել մեր հնարավորությունները: Եթե այս ուղղությամբ հետևողական քայլեր իրականացվեն, Հայաստանը կարող է ունենալ կայուն տնտեսություն և բարձր կենսամակարդակ ունեցող բնակչություն», – ասաց նա:

Ռազմավարական ուղղություն՝ ներդրումների ներգրավում և հանքավայրերի ուսումնասիրություն

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ասատուր Վարդանյանը ներկայացրեց պետության տեսլականը՝ ուղղված հանքարդյունաբերության արդյունավետ կառավարմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը:

«Այս տարի մետաղական հանքավայրերի շահագործման նոր թույլտվություններ չեն տրվել: Ունենք անհրաժեշտություն՝ կատարել երկրաբանական նոր ուսումնասիրություններ: Սա ռազմավարական ուղղություն է: Մեր նպատակն է ստեղծել այնպիսի նախադրյալներ, որ միջազգային փորձ ունեցող կազմակերպությունները ներդրումներ կատարեն Հայաստանում», – ասաց Վարդանյանը:

Նա ընդգծեց, որ արդեն ընթանում են բանակցություններ տարբեր երկրների, այդ թվում՝ Չինաստանի և Իրանի հետ՝ պղնձաձուլարանի ստեղծման հնարավոր տարբերակների շուրջ:

Վարդանյանը նաև բարձրաձայնեց ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրները՝ տեղեկատվության անհասանելիություն, ԽՍՀՄ-ից ժառանգված պաշարների հաշվարկման հնացած համակարգ և այլն:

Այս ամենի լուծման ճանապարհին ձեռնարկվել են մի շարք քայլեր՝ նախաձեռնվել է թվայնացման լայնածավալ ծրագիր, որպեսզի օտարերկրյա ներդրողները հասանելիություն ունենան համապարփակ և արդիական տեղեկատվության նկատմամբ:

Աշխատանքներ են տարվում՝ Հայաստանն ընդգրկելու CRIRSCO միջազգային կոմիտեում, որի արդյունքում հայկական պաշարների հաշվարկներն ու հաշվետվությունները կլինեն համադրելի միջազգային չափորոշիչներին:

«Նախատեսում ենք ստեղծել երկրաբանական ծառայություն, որը պատրաստ կլինի աշխատանքի՝ մինչև 2027 թվականը: Այս նախաձեռնության շրջանակում համագործակցում ենք ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ՝ վերցնելով նրանց լավագույն մոդելները», – հավելեց Վարդանյանը:

Հանքարդյունաբերությունը, որպես տարածքային զարգացման հենք

Հանքարդյունաբերությունը միայն տնտեսության մի ճյուղ չէ.այն ուղղակի ազդեցություն ունի մարզային զարգացման, աշխատատեղերի ստեղծման և ենթակառուցվածքների բարելավման վրա: Ներդրողների մուտքն ու նոր հանքավայրերի զարգացումն այդ ազդեցությունն էլ ավելի կխորացնեն: Արտադրական շղթայի ընդլայնումը շահավետ է և կարող է ստեղծել լուրջ տնտեսական արժեք: Այդ նպատակով ծրագիրը ներառում է պաշարների գնահատման և տնտեսական հաշվարկների համալիր գործընթաց:

«Տարիներ հետո, երբ գործող հանքավայրերը սպառվեն, մեր սերունդների համար պետք է հանքահումքային հենք ապահովենք», – շեշտեց փոխնախարարը:

Հայաստանում հանքարդյունաբերությունը կարող է ծառայել որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ:

Մինչդեռ ժամանակակից մարտահրավերները պահանջում են ոչ միայն խորը վերլուծություն, այլև համարձակ ռազմավարական գործողություններ՝ խելամիտ կառավարում, միջազգային ստանդարտների ներդրում, ներդրողների ներգրավում և երկարաժամկետ համագործակցություն:

ԶՊՄԿ-ՈՒՄ ՇՐՋԱՅՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարությունը՝ հավատարիմ իր խոստմանը, շարունակում է շրջայցերը ձեռնարկության տարբեր արտադրամասերում: Գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին ընդամենը մի քանի ամիս առաջ էր շրջայց իրականացրել, որի ընթացքում հանդիպել էր աշխատակիցների հետ, լսել ու գրի առել նրանց հուզող հարցերն ու խնդիրները: Եվ ահա կարճատև դադարից հետո հսկա ձեռնարկության ղեկավարը նախընտրում է՝ կրկին հարց ու պատասխանի ձևաչափով, հանդիպումներ անցկացնել բազմահազարանոց կոլեկտիվի հետ, հատ-հատ լսել յուրաքանչյուրին:

«Նախորդ ու այս շրջայցերի միջև մեծ տարբերություն եմ նկատում: Արտադրամասերում տրամադրությունները փոխվել են՝ դրական առումով: Ամենակարևորը փոխադարձ վստահությունն է, - ասում է Ռոման Խուդոլին: Այդ վստահությունը ես տեսա, որովհետև մենք ինչ խոստանում ենք՝ իրականացնում ենք: Եվ առհասարակ, բաց ենք ցանկացած երկխոսության համար և պատրաստակամ՝ լուծելու անհնարին թվացող խնդիրները: Ես բարձր եմ գնահատում այս հանդիպումները, հասարակ աշխատակցի հետ կապը շատ եմ կարևորում: Ծրագրում ենք տարեկան 3 այսպիսի շրջայց իրականացնել»,- նշեց կոմբինատի ղեկավարը:

Հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասում նա, դիմելով հավաքված աշխատակիցներին, նշեց.

«Այն բոլոր հարցերը, որոնք մենք նախորդ անգամ քննարկեցինք, մի մասը լուծված է, իսկ որոշները դեռ ընթացքի մեջ են: Ուզում եմ առանձնանել երկու շատ կարևոր անելիքներ, որոնք դեռ չենք լուծել: Առաջինը՝ ասպիրացիոն համակարգի ներդրումն է: Սարքավորումները առայժմ Չինաստանում են: Ծրագրում ենք գալիք տարվա առաջին կիսամյակում օդափոխության նոր համակարգի հարցը կոմբինատում լիովին լուծել:

«Սա գլոբալ ծրագիր է: Նախ մենք մշտադիտարկում իրականացրինք բոլոր արտադրամասերում՝ հասկանալու, թե որտեղ կա օդափոխության խնդիր: Պարզվեց, որ հին համակարգը այլևս չի գործում, և անհրաժեշտ է զրոյից կառուցել նոր համակարգ: Թեպետ ծրագիրը երկարաժամկետ է, բայց մեզ համար առաջնահերթ է մարդկանց առողջությունը»,– ընդգծեց Խուդոլին: «Երկրորդ հարցը՝ կենցաղային պայմաններին է վերաբերում, որոնք մենք կլուծենք հաջորդ տարի»:

Աշխատակիցները ողջունեցին տնօրինության որդեգրած քաղաքականությունը՝ ընդգծելով, որ դեմ առ դեմ հանդիպելը արդյունավետ աշխատանքի լավագույն տարբերակն է: Հանքաքարի ջարդման և տեղափոխման արտադրամասի ընդհանուր գծով պետի տեղակալ Արթուր Հակոբյանն ասում է, որ կոլեկտիվը բարձր է գնահատում այս ձևաչափով հանդիպումները: Էլ ավելի լավ աշխատելու լրացուցիչ ազդակ են տալիս: Այս կերպ խնդիրները բարձրաձայնվում են, իսկ աշխատակիցը դառնում է ավելի լսելի:

Կոմբինատի ղեկավարության հաջորդ կանգառը հարստացուցիչ ֆաբրիկայում էր: Այստեղ մանրակրկիտ ծանոթացան աշխատանքային պայմաններին, վերջերս իրականացված շենքային փոփոխություններին: Ֆաբրիկայում ևս բարձրացված հարցերը վերաբերում էին մասնագիտական աճի հնարավորություններին և կոմբինատում աշխատանքի ընդունելությանը: Ձեռնարկության գլխավոր տնօրենն ընդգծեց՝ միայն սոցիալական հարց լուծելու նպատակով չեն կարող նոր մարդկանց ընդունել աշխատանքի: Շրջայցի վերջում ԶՊՄԿ-ի գլխավոր տնօրենը նշեց, որ ընդամենը մի քանի ամիս անց կրկին կհանդիպեն նույն տեղում՝ խոսելու արդեն կոնկրետ ձեռքբերումների մասին:

Լուսանկարիչ՝ Նվեր Ձելյա

Շրջայցի ժամանակ Ռոման Խուդոլին իրեն ուղղված հարցին պատասխանեց՝ շեշտելով, որ ԶՊՄԿ-ն չի վճարում աշխատակիցների ոչ մասնագիտական կրթության ուսման վճարները: Ձեռնարկությունը խրախուսում է հանքարդյունաբերության ոլորտին առնչվող բուհական կրթությունը և այս դեպքում է միայն պատրաստ փոխհատուցել: «Իսկ եթե, օրինակ, դուք սովորում եք վարսավիրություն, կներեք, այս դեպքում մենք չենք վճարի»,-նշեց Ռ.Խուդոլին: Միևնույն ժամանակ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում բարձր են գնահատում աշխատանքային հմտությունները և հնարավորություններ ստեղծում մասնագիտական աճի համար:

«Արտադրամասի ղեկավարությունը, եթե համարում է, որ աշխատակիցը հեռանկարային մասնագետ է և արժե առաջ տանել, մենք կառանձնացնենք նրանց, կկրթենք, վերապատրաստման դասընթացների կուղարկենք, այդպիսով մենք կունենանք նաև ռեզերվային մասնագետներ, որոնց կարիքը, անշուշտ, կզգացվի»,-պարզաբանեց կոմբինատի ղեկավարը:

Հերմինե Միքայելյան

ԱՇԽԱՏԱԿԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

←

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԶՊՄԿ բարեգործական հիմնադրամի կողմից **ուսանող աշխատակիցների ուսման** վճարների փոխհատուցման կարգը

ՕՐԻՆԱԿ 1

- Էլեկտրիկ աշխատակիցը սովորում է էներգետիկի մասնագիտություն
- Բուժքույր աշխատակիցը սովորում է բժշկական մասնագիտություն

ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է

ՕՐԻՆԱԿ 2

- Վարորդ աշխատակիցը սովորում է իրավաբանական, տնտեսագիտական, մանկավարժական կամ այլ ՈՉ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ մասնագիտություն
- Ֆլոտացնող աշխատակիցը սովորում է հոգեբանի, բժշկի, ֆինանսիստի կամ այլ ՈՉ ՊՐՈՖԻԼԱՅԻՆ մասնագիտություն

ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ

Փոխհատուցման չափը՝ ըստ ՄՈԳ-ի (միջին որակական գնահատականի)

ՄՈԳ	ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ
Մինչև 49.99%	– ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ
Մինչև 69.99%	– 50% ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ
Մինչև 89.99%	– 70% ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ
Մինչև 100%	– 100% ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ

Ուսուցիչը՝ սահմանին

Դամակարգչի փոքրիկ պայուսակն ու գրքերը ձեռքին, խնամքով հագնված մի երիտասարդ շուրջ երկու ամիս է, ինչ առավոտյան 8-ին դուրս է գալիս Կապանի սահմանամերձ Սյունիք գյուղի համեստ բնակարանից ու քայլերն ուղղում դեպի տեղի միջնակարգ դպրոց: Տարոն Մարգարյանը մաթեմատիկայի ուսուցիչ է: Ծնվել է մայրաքաղաքում, ավարտել՝ Երևանի պետական համալսարանն ու եկել երազանքն իրականացնելու:

Դեռ 44-օրյա պատերազմի օրերին՝ մարտի դաշտում, Տարոնը որոշեց, որ պիտի ուսուցիչ դառնա: Ասում է՝ փորձում էր հասկանալ, թե ինքը ինչպես կարող է փոխել հեռավոր գյուղերի կյանքը, ինչպես կարող է օգտակար լինել սահմանին մոտ ապրող մարդուն: Երկար է մտածել ու որոշել՝ մտածողություն փոխելու համար պետք է կրթել կյանք մտնող սերնդին:


Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր հաղորդում ուսուցչի վերաբերյալ

-Ունենալ սերունդ, որը չի կրկնում, անգիր չի անում, չի փորձում դուր գալ, փոխարենը մտածում է, տրամաբանում, քննադատում ու եզրահանգումներ անում, սա էր նպատակս: Փնտրում էի վայր, որտեղ կողջունեն տեսլականս: Հենց այդտեղ էր, որ խաչվեցին իմ ու «Դասավանդիր՝ հանուն Հայաստանի» ծրագրի ուղիները: Անցա դասընթացը, ծանոթացա մեթոդիկային, հասկացա, որ հենց այս ծրագիրն է իմ նպատակներն իրագործելու հնարավորությունը,- ասում է Տարոն Մարգարյանը:

Նրա հետ սահմանամերձ այս բնակավայր է եկել նաև կինը: Պսակադրությունից օրեր անց է զույգը տեղափոխվել Սյունիք: Կենցաղային դժվարություններին նայում են ժպիտով:

Տարոն Մարգարյանը շեշտում է:
- Շատ ավելի կարևոր արժեքներ կան՝ արթնանալ ու քո աչքով տեսնել, որ սահմանը խաղաղ է, որ հարևանդ խաղաղության մեջ է ապրում, որ այսօր էլ հնարավորություն ունես քո տեսլականն իրականություն դարձնելու:

«Ուզում եմ օրինակ լինել հենց իմ ապրելակերպով, ուզում եմ, որ աշակերտները տեսնեն սկզբունքային, երիտասարդ, ուժեղ ու ժամանակակից ուսուցչի կերպար:

Ուզում եմ, որ հասկանան՝ մանկավարժությունը աշխատավարձի մասին չէ: Նաև ցանկանում եմ, որ տեղացի երիտասարդները համոզվեն՝ այս գյուղը հենց մեր տարիքի մարդկանց ապրելու վայրն է» — ասում է նա:

Սյունիքի միջնակարգ դպրոցում ուսումնական տարեսկզբին ուսուցչի մի քանի թափուր հաստիք կար: Տնօրեն Լիլիթ Առաքելյանը հիշում է.

- Սեպտեմբերի 1-ին Տարոնը դպրոց մտավ այնպիսի տեսքով, ինչպես նկարագրում են դասական գրողները գյուղ գործուղվող ուսուցիչներին, ապա կարճ ժամանակում հասցրեց դառնալ թե՛ աշակերտների, թե՛ գործընկերների սիրելին: Կարևոր էր լրացնել մանկավարժական անձնակազմը, իսկ «Դասավանդիր՝ հանուն Հայաստանի» ծրագիրը ոչ միայն վստահելի գործընկեր է, այլև ունի ընդունելի ու առաջադեմ մեթոդաբանություն...

«Դասավանդիր՝ հանուն Հայաստանի» ծրագիրը մեր հանրապետությունում գործում է արդեն 10 տարի, Սյունիքում՝ 4: Այս ծրագրի շրջանակում բազմաթիվ երիտասարդներ մեկնում են հեռավոր բնակավայրեր, կերտում նոր մտածողություն, թողնում հետք, որի ազդեցությունը միջավայրը զգում է նույնիսկ նրանց հեռանալուց հետո:
Ինչպես Սյունիքի զարգացմանը միտված բազմաթիվ ծրագրերում, այս մեկում ևս ԶՊՄԿ-ն անմասն չէ: 2025-ի հունիսին Սյունիքի մարզպետը, «Դասավանդիր՝ հանուն Հայաստանի» ծրագրի և ԶՊՄԿ բարեգործական հիմնադրամի ղեկավարը եռակողմ համագործակցության հուշագիր են ստորագրել: Հանքարդյունաբերական հսկան ստանձնել է ծրագրով Սյունիք գործուղվող ուսուցիչ-առաջնորդների տեղակայման ծախսերի և հավելավճարների ֆինանսավորումը:

Տիգրանուհի Բաղալյան

ԶՊՄԿ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱԿՏԻՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԵՐԻ ՀԵՏ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՎ ԳԻՏԱՀԵՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Այս տարի առաջին անգամ Հայաստանի խոշորագույն հանքարդյունաբերական ընկերությունը միացավ մի նոր նախագծի, որն իր շուրջը համախմբեց հանրապետության տարբեր բուհերի ուսանողներին: Խոսքը «CaseKey» ակադեմիայի կազմակերպած բիզնես ծրագրերի մրցույթի մասին է: Սա մի նոր հարթակ է գործատու–ուսանող կապի և համագործակցության համար:

«CaseKey» բիզնես խնդիրների լուծման մրցույթի կազմակերպչական թիմի անդամ Հովհաննես Երիցյանն ասում է.

«Առաջին անգամ ենք համագործակցում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ: Մեզ համար սա շատ կարևոր ձեռքբերում է, որովհետև, նախ՝ կոմբինատը Հայաստանի խոշոր հարկատուներից է, բացի այդ՝ ֆինանսավորում է բազմաթիվ կառույցների, աջակցում տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը: Այս առումով շատ կարևոր է, որ ուսանողները հասկանան, թե ինչպիսի գործունեություն է ծավալում կոմբինատը: Երկրորդ կարևոր փաստը՝ կոմբինատի դռները բաց են. մասնակիցը գալիս է և ներսից է տեսնում հանքարդյունաբերական ընկերության աշխատանքը»:

«CaseKey» ակադեմիայի կազմակերպած բիզնես ծրագրերի մրցույթի շրջանակում, կոմբինատի ղեկավարությունը ուսանողներին առաջադրանք էր տվել՝ ներկայացնել իրենց պատկերացմամբ՝ հաջողված բիզնեսի նորարարական մոդել: Հանրապետության տարբեր բուհերից ընտրված ուսանողները խոշորագույն հանքարդյունաբերական ձեռնարկությունում ներկայացրին բիզնեսի զարգացման իրենց մոդելը և բազմակողմանի քննարկեցին այն կոմբինատի ղեկավարության հետ:

«ԶՊՄԿ» ՓԲԸ կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Աննա Սաղաբալյանը, խոսելով «CaseKey» ակադեմիայի կազմակերպած բիզնես ծրագրերի մրցույթի մասին, շեշտում է՝ ընկերության նպատակը ուսանողների համար վարժանք անցկացնելն էր.

«Այսինքն՝ ստիպել ոլորտի հետ առնչություն չունեցող երիտասարդներին մտածել սոցիալական և բնապահպանական խնդիրների մասին, գտնել դրանց լուծման տարբերակներ, ինչպես նաև՝ արձագանքել հասարակության մտահոգություններին ու հարցերին: Մեզ համար սա հնարավորություն է երիտասարդներին հետաքրքրել այս ոլորտով և ցույց տալ, թե որքան գիտահեն է հանքարդյունաբերությունը»:

Լավագույն բիզնես գաղափարները, որոնք առնչվում էին հանքարդյունաբերության ոլորտին, ղեկավարության կողմից խրախուսվեցին՝ նվերներով:

Այն, ինչ չի տալիս բուհը, «CaseKey»-ը կյանքի է կոչում: Հաջողության հասած մարդկանց հետ շփում, կապերի ստեղծում, մրցունակ բիզնես կառուցելու գաղափարներ և խնդիրներ լուծելու հմտություններ:

Հանքարդյունաբերությունը ներսից տեսնելու և դրա մասշտաբները պատկերացնելու համար ուսանողների համար շրջայց կազմակերպվեց ԶՊՄԿ-ում:

Ուսանողուհի Աննա Սմբատյանը այցից այնքան էր ոգևորվել, որ արդեն մտածում է այս ոլորտում աշխատելու մասին:

«Իսկ ինչու՝ ոչ»,– ասում է նա:

Երկօրյա այցի ընթացքում ուսանողները եղան նաև Արծվանիկի պոչամբարում, որի շուրջ հաճախ միֆեր են հյուսվում: Հակառակ մեդիայում տարածված քարոզչությանը՝ ուսանողները ականատես եղան պոչանքի մաքրման փուլային գործընթացին, պրոգրեսիվ ռեկուլտիվացիային և այն քայլերին, որոնք ձեռնարկում է կոմբինատը՝ նվազեցնելու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը:

Ուսանողների շրջայցն ու համագործակցությունը այս անգամ եզրափակվեց նոր կապերով և տպավորիչ լուսանկարներով: Ոմանք էլ խոստացան որպես մասնագետ վերադառնալ ու աշխատել այստեղ:

Հերմինե Միքայելյան

Ներդրողները գնալու են այնտեղ, որտեղ խաղի կանոնները հստակ են, համակարգերը՝ կայուն, երկիրը՝ պատրաստ ներդրումների

Վալել Ջաբեր

Հոկտեմբերի սկզբին Ծաղկաձորում կայացավ Mining Armenia Forum-ը (Հայաստանի հանքարդյունաբերական ֆորում)՝ երկօրյա համաժողովը, որը Հայաստան էր բերել աննախադեպ քանակի և աշխարհագրության միջազգային փորձագետների՝ ոչ միայն հանքարդյունաբերության, այլև հարակից՝ ֆինանսական, բնապահպանական և այլ ոլորտներից:

Մասնակիցներից մեկը միջազգային աշխարհահռչակ Wood Mackenzie խորհրդատվական ընկերության հանքարդյունաբերության և մետաղների գծով տնօրեն Վալել Ջաբերն էր, որի դիտարկմամբ՝ աշխարհում ամենուր մետաղների պահանջարկն ավելանում է, և երկրներն ուժեղ մրցակցության մեջ են՝ ներդրողներ ներգրավելու համար: Ներդրողները գնալու են այնտեղ, որտեղ խաղի կանոնները հստակ են, համակարգերը՝ կայուն, երկիրը՝ պատրաստ ներդրումների, — բանաձևում է մասնագետը:

Նրա խոսքերով, աշխարհը գնալով ավելի շատ էներգիայի կարիք է ունենալու, առաջանալու է ավելի շատ կանաչ էներգիայի պահանջարկ, և գնալով ավելի ու ավելի է աճելու էլեկտրամոբիլների արտադրությունը: Ծուկայի պահանջարկը մեծ է, և սա լավ ժամանակ է Հայաստանի համար՝ օգտվելու այս հնարավորությունից, ցույց տալու ներդրողին, որ ունի լավ միջավայր և ներդրումային դաշտ, մինչդեռ, եթե ներդրողը չգա այստեղ, կգնա որևէ այլ՝ ավելի բարենպաստ երկիր, բացատրեց Ջաբերը:

Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումի ընթացքում շատ խոսվեց այն մասին, որ Հայաստանի գործող հանքերը շատ չեն՝ ընդամենը մի քանիսը, և դրանց պաշարները անսպառ չեն: Վալել Ջաբերը պնդում է, որ ժամանակն այստեղ հսկայական նշանակություն ունի: Մեկ նոր հանք կառուցելը տևում է մոտ 15 տարի՝ հայտնաբերումից մինչև արտադրություն: Եթե այսօր ներդրումներ ներգրավես, նոր հանքը կսկսի գործել 10 և ավելի տարի անց:

Ուրեմն պետք է հիմա սկսել՝ 10 տարուց արդյունք ակնկալելու համար:

Նրա կարծիքով, պետք է սկսել ներուժը բացահայտելուց՝ ներդրումներ անել հանքերի մասին անհրաժեշտ տեղեկատվության հասանելիության մեջ, քարտեզագրել տարածքը, որպեսզի ներդրողին հասկանալի լինի ողջ գործընթացը՝ **պահանջները հստակ, օրենքները՝ կանխատեսելի:**

Այս առումով անելիքներ ունեն և՛ կառավարությունը, և՛ մասնավոր հատվածը: Կառավարությունը պետք է ապահովի համապատասխան դաշտ՝ նոր ներդրումներ ներգրավելու համար, իսկ գործող ընկերությունները պետք է որդեգրեն միջազգային լավագույն փորձը:

Արդյունավետ գործունեության համար պետք է բալանս ստեղծել երեք հիմնական շահագրգիռ կողմերի՝ կառավարության, ընկերությունների և հանրության միջև: Ոչ մի երկրում այդ հավասարակշռությունը կատարյալ չէ: Եթե դիտարկենք այնպիսի հանքարդյունաբերական երկրներ, ինչպիսիք են Կանադան ու Ավստրալիան, ապա կհամոզվենք, որ այդ երկրները կարողացել են որոշակի բալանս ստեղծել:

Բանախոսի մեկնաբանությամբ՝ սոցիալական ռիսկեր կան ամեն տեղ. յուրաքանչյուր երկիր իր խնդիրներն ու առանձնահատկություններն ունի: Կարևոր է գտնել բալանսը, որպեսզի հանքարդյունաբերության հնարավորությունները հավասարակշռվեն պետության, ներդրողի և հասարակության շահերի միջև:

Միջազգային փորձագետը վստահեցնում է, որ հանքարդյունաբերության ոլորտը շեշտակի տեմպերով ներդնում է նորագույն տեխնոլոգիաներ, կանաչ լուծումներ և արհեստական ինտելեկտ: Հայաստանը նույնպես կարող է և պետք է օգտվի այդ հնարավորություններից:

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ՝ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԼԻՆ

Հանքարդյունաբերական ընկերության ամենակարևոր ստորաբաժանումներից մեկը մետալուրգիական լաբորատորիան է՝ այն հատվածը, որտեղ գիտությունը միախառնվում է արտադրությանը: ՀՊՄԿ մետալուրգիական լաբորատորիան 33 աշխատակից ունի, հիմնական մասնագետները՝ հարստացնողներ,որոնք բաժանվում են խմբերի՝ Ֆլոտացնողներ, հանքաքարի մանրեցման և նմուշառման խմբի մասնագետներ: Լաբորատորիան ունի նաև ազդանյութերի որակի վերահսկման խումբ(քիմիկոսներ):

Լաբորատորիայի դերը կարելի է ձևակերպել այսպես՝ գտնել, հասկանալ և շտկել:

Երբ հարստացուցիչ ֆաբրիկայի որևէ փուլում առաջանում է տեխնոլոգիական շեղում կամ թերացում, հենց այստեղ՝ լաբորատորիայում է բացահայտվում դրա պատճառը: Փոքր քանակությամբ նմուշների փորձարկումները հնարավորություն են տալիս հայտնաբերել խնդիրը և կատարել անհրաժեշտ ճշգրտումներ՝ առանց ամբողջ համակարգը կանգնեցնելու:

Այսպես, լաբորատորիան ոչ միայն վերահսկող օղակ է, այլև գործընթացների օպտիմալացման կենտրոն: Դրա շնորհիվ բարելավվում են ֆաբրիկայի աշխատանքային ցուցանիշները, բարձրանում է կորզման արդյունքը, իսկ տեխնոլոգիական գործընթացները դառնում են առավել արդյունավետ:

Արտադրական գործընթացներում լաբորատոր փորձարկումները կարևոր են ոչ միայն հանքաքարի որակի գնահատման, այլև ֆաբրիկայի աշխատանքի օպտիմալացման համար: Այստեղ ստացված տվյալները հիմք են կարևոր որոշումների համար՝ ուղղված արտադրողականության բարձրացմանը և տեխնոլոգիական ցուցանիշների բարելավմանը:

-Լաբորատորիայի աշխատանքը գիտահեն է և շարունակական՝ զարգացման մեջ, - ներկայացնում է կառույցի ղեկավար Անահիտ Անտոնյանը, - ներգրավված է միջազգային փորձը՝ հրավիրված մասնագետների, փորձարարական մեթոդների և ժամանակակից մոտեցումների միջոցով: Միաժամանակ, լայնորեն կիրառվում են տեխնոլոգիական նորարարություններ՝ բարձր ճշգրտությամբ սարքավորումներ և ավտոմատացված համակարգեր, որոնք զգալիորեն նվազեցնում են ձեռքի աշխատանքի ծավալը և բարձրացնում տվյալների ճշգրտությունը:

Այս ամենը դարձնում է մետալուրգիական լաբորատորիան ոչ միայն ֆաբրիկայի անբաժան մաս, այլև նրա «գիտական ուղեղը» այնտեղ, որտեղ յուրաքանչյուր արդյունք ստուգվում է, հիմնավորվում և բերում արտադրական հաջողության:

Մելադա Պողոսյան. «Երբ աշխատանքում կա թիմ, ժպիտն ինքն է գալիս»:

Վերոնշյալ աշխատանքներն իրականացնող թիմի առանցքային անդամներից մեկն է Մելադա Պողոսյանը՝ Քաջարան խոշորացված համայնքից: Նա նմուշավորման ավագ մասնագետ է և իր մասնագիտական կյանքը կապել է կոմբինատի հետ՝ արդեն 17 տարի, որոնցից հինգը՝ մետալուրգիական լաբորատորիայում:

Մելադա Պողոսյան

«Այս աշխատանքը հմտություններ է պահանջում և անվտանգության կանոնների խստագույն պահպանում: Բայց այդ ամենին շատ արագ ես ընտելանում, եթե կողքիդ ունես հուսալի և հմուտ գործընկերներ», — պատմում է նա՝ ժպտալով:

Այստեղ աշխատում են մարդիկ, որոնք ապրում են նույն միջավայրում, կիսում նույն արժեքները և գիտակցում, որ իրենց աշխատանքը ներդրում է նաև համայնքի զարգացման գործում:

Անահիտ Անտոնյան. «Շղթան գործընթացում պահելու հիմնական գործոնը մարդն է».

«Եթե թիմի ներսում չկա փոխըմբռնում ու ներշնչվածություն, արդյունքը չի կարող լինել կայուն: Մարդկանց հոգեբանությունը հասկանալը և անհատական մոտեցում ցուցաբերելը դարձել է ժամանակակից կառավարման մեթոդաբանության կարևոր մաս», — լրացնում է լաբորատորիայի ղեկավար Ա.Անտոնյանը:
Զրույցի ընթացքում անդրադարձանք նաև կանանց դերակատարությանը թե՛ աշխատավայրում, թե՛ ընտանիքում: Ա. Անտոնյանի համոզմամբ,

Անահիտ Անտոնյան

անհատական մոտեցումը կարևոր է հատկապես այս համատեքստում:

«Կարևոր է տեսնել ոչ միայն մասնագետին, այլև մարդուն՝ իր ընտանեկան միջավայրով, արժեքային համակարգով և այն դիրքորոշմամբ, որը նա ունի սոցիալական ու հասարակական հարցերի շուրջ: Այս ամենը ձևավորում է նրա վարքագիծը նաև աշխատանքի մեջ», — ընդգծում է նա:

Լիլիթ Իսրայելյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԶԳԱԼԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ ԿԱ». ԿԻՐՍՏԵՆ ՀԱՆԴ

Հոկտեմբերի 3-4-ը կայացած Հայաստանի հանքարդյունաբերական ֆորումի (Mining Armenia Forum)-ի մասնակից՝ հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման փորձագետ Կիրստեն Հանդի հետ զրուցել ենք ֆորումի և Հայաստանում հանքարդյունաբերության, բնապահպանական և այլ հարակից խնդիրների մասին:

Կիրստեն Հանդը աշխարհի առաջատար հանքարդյունաբերական ընկերություններից մեկի՝ «Վալե» -ի Կլիմայի և Բնության ռազմավարության ղեկավարն է, իսկ ֆորումին մասնակցում էր որպես ոլորտային փորձագետ:

Կիրստեն Հանդ
Հանքարդյունաբերության կայուն զարգացման փորձագետ

«Համաշխարհային բանկում աշխատանքի տարիներին շատ եմ եղել Հայաստանում, աշխատել եմ հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումների ծրագրերի վրա: 2016-2020 թվականներին շատ եմ աշխատել Հայաստանի կառավարության, և այլ շահագրգիռ կողմերի հետ»,- ասաց Հանդը՝ շեշտելով, որ հիմա հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման ուղղությամբ զգալի առաջընթաց կա, և կայուն զարգացման խնդիրները գնալով ավելի կարևոր են լինելու ոլորտում.

Արդյոք հնարավո՞ր է համատեղել կայուն զարգացումն ու հանքարդյունաբերությունը

Կիրստեն Հանդը աշխարհի առաջատար ընկերություններում Կայուն զարգացման ոլորտի ղեկավարման փորձ ունի: Համոզված է, որ թեև կայուն զարգացման և հանքարդյունաբերության համատեղումը շարունակում է մարտահրավեր մնալ, սակայն, այնուամենայնիվ, դա հնարավոր է.

«Մենք ունենք մետաղների կարիք: Սա շատ է կրկնվել ֆորումի ընթացքում՝ մեզ շրջապատող ցանկացած բան, եթե չի աճում հողից՝ հանքարդյունաբերության արդյունք է: Ամեն ինչ՝ ձեր ատամի մածուկից մինչև հագուստ, ձեր աթոռը, արևային վահանակները, քամու տուրբինները, որոնք մեզ անհրաժեշտ են էներգետիկ փոխակերպման համար: Այդ ամենը գալիս է հանքարդյունաբերությունից: Հետևաբար, դուր գա մեզ դա, թե՝ ոչ. աշխարհը հանքարդյունաբերության կարիքն ունի:

Այո, կարևոր է նաև վերամշակումն ու վերաօգտագործումը: Բայց մետաղների պահանջարկն այնքան կտրուկ է աճում, որ եթե նույնիսկ այս մոլորակի բոլոր նյութերը վերամշակենք, միևնույնն է՝ բավարար չի լինի: Հետևաբար՝ հանքարդյունաբերությունն անհրաժեշտություն է: Եվ դա նշանակում է, որ պետք է պատասխանատու կերպով անենք»,- բացատրեց միջազգային փորձագետը:

«Կայուն զարգացումը դիտարկվում է որպես մեկ ընդհանրություն, ոչ թե նախկինի նման՝ բնապահպանաություն, սոցիալական կառավարում, առողջություն և անվտանգություն՝ որպես առանձին-առանձին դիսցիպլիններ: Ապագայում բոլոր ոլորտներում այս խնդիրները որպես կայուն զարգացման մեկ ընդհանուր կառուցվածք

են լինելու: Բնությունը, մարդիկ, կլիմայի փոփոխությունը, ջուրը, այս ամենը փոխկապակցված են, և անհրաժեշտ է ինտեգրված մոտեցում»:

Ֆորումի ընթացքում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ներկայացրեց ընկերության կայուն զարգացման զեկույցը:

Հայաստանում ԶՊՄԿ-ն այն բացառիկ ընկերություններից է, որ հրապարակում է նման զեկույցներ: Արդյոք սա կարևո՞ր է: Հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման փորձագետ Կիրստեն Հանդի կարծիքով, կարևոր է թե՛ հաշվետվողականությունը, թե՛ ամենօրյա աշխատանքը:

«Կարևոր է՝ գտնել ոսկե միջինը, բնապահպանական մեր հետքը նվազեցնելու, կլիմայական մարտահրավերներին դիմագրավելու ուղղությամբ իրական դաշտային աշխատանքի և թափանցիկ կերպով հաշվետվողականության աշխատանքը իրականացնելու միջև: Հաշվետվողականությունը հիմնարար է, բայց այն չի կարող միակ կարևոր բանը լինել: Մենք պետք է նաև իրական աշխատանք անենք, որի մասին էլ հաշվետու լինենք»,- նշեց Կիրստեն Հանդը:

Ի դեպ, հաջորդ տարի Հայաստանը հյուրընկալելու է նաև «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (COP 17): ԶՊՄԿ կայուն զարգացման զեկույցը հենց նաև այդ առիթով ամբողջությամբ ձևավորված էր Հայաստանի և Սյունիքի էնդեմիկ կենդանատեսակների նկարներով:

«Հայատանը հրաշալի բնություն ունի, իսկ հանքարդյունաբերությունը հենց այդ բնության մեջ է իրականացվում: Կարծում եմ, հրաշալի հնարավորություններ կան ցույց տալու, որ հանքարդյունաբերությունը կարող է իրականացվել բնության հետ ներդաշնակ՝ վերականգնելով հասցված վնասը և ես հույս ունեմ, որ COP 17 –ի շրջանակներում հենց այս թեմայով քննարկումների առիթ կլինի»,- ասաց միջազգային փորձագետը:

Կիրստեն Հանդի կարծիքով, Հայաստանի համար COP17 հյուրընկալելը մեծ հնարավորություն է:





ԶՊՄԿ-ն՝ թիվ մեկ դոնոր Սյունիքում

Արյան պաշարները մշտապես համալրման կարիք ունեն: Այդ իսկ պատճառով Գորիսի արյան փոխներարկման կայանը մշտապես շարժի մեջ է՝ Սյունիքի մարզի բոլոր քաղաքներում: Հերթական անհատույց արյունատվության ակցիան կազմակերպվել էր Քաջարանում:

ԶՊՄԿ-ն արդեն երրորդ տարին է, ինչ մասնակցում է անհատույց դոնորության ակցիաներին: Ձեռնարկությունն այն եզակին է Սյունիքի մարզում, որի աշխատակիցները ամեն տարի մեծ պատրաստակամությամբ, անվճար հիմունքներով մասնակցում են դոնորական ակցիաներին: Մարզային կայանի ղեկավարը սա ողջունելի է համարում:

«ԶՊՄԿ-ի հետ մեր համագործակցությունը սկսվել է 2023 թվականից, և այս ընթացքում 100-ից ավելի աշխատակիցներ անհատույց դոնորական արյուն են հանձնել: Այս աշխատավոր կոլեկտիվը նվիրյալ է և մեծ պատրաստակամությամբ է մասնակցել ակցիային: Նման միջոցառումները դոնորական արյուն նվիրելու մշակույթ են ձևավորում», — ասում է ՀՀ ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի արյան ծառայության Սյունիքի բաժանմունքի վարիչ Արթուր Առաքելյանը:

«Սա բխում է ընկերության կորպորատիվ արժեքներից: Դոնորական ակցիային մասնակցելով՝ աշխատակիցը պատասխանատվություն է կրում վիրավորների և համայնքի բնակչության նկատմամբ», — ընդգծում է ԶՊՄԿ բժշկական ծառայությունների համակարգող Տրդատ Գրիգորյանը:

Տրդատ Գրիգորյան
ԶՊՄԿ բժշկական ծառայությունների համակարգող

«Մտածում ես՝ եթե կարող ես ինչ-որ մեկին մի փոքր բանով օգնել, ինչո՞ւ չանել, երբ ունես այդ հնարավորությունը: Շատ գովելի նախաձեռնություն է: Միշտ չէ, որ հարմար է հասնել Գորիս կամ Երևան՝ արյուն հանձնելու: Պարզապես պետք է մարդկանց շրջանում մի քիչ ավելի լավ տարածել դոնորության կարևորությունը, և այդ դեպքում շատերը կցանկանան արյուն հանձնել», — կարծում է «ԶՊՄԿ» ՓԲԸ բնապահպանության բաժնի աշխատակից Ասթինե Սարգսյանը:

«Տարվա ընթացքում երկու անգամ դոնորից արյուն ենք վերցնում: Ընդհանրապես բացասական կարգի արյունն է համարվում դեֆիցիտ՝ դրա կարիքը միշտ զգացվում է: Այդուհանդերձ, ձգտում ենք բոլոր կարգերի արյուններից ունենալ: Երբևէ չի եղել դեպք, երբ հիվանդին արյուն անհրաժեշտ լինի և մենք չկարողանանք ապահովել», — նշում է ՀՀ ԱՆ «Յոլյան» արյունաբանության և ուռուցքաբանության կենտրոնի արյան ծառայության Սյունիքի բաժանմունքի ավագ բուժքույր Ադելինա Բաղդագուլյանը:

Մարզի թիվ մեկ հանքարդյունաբերական ընկերության աշխատակիցները արդեն հինգերորդ անգամ են մասնակցում «Հանձնիր արյուն, փրկիր կյանքեր» ակցիային:Վերջին երեք

տարում անվճար դոնորության ակցիաներ են կազմակերպվել Քաջարանում, Կապանում և կոմբինատի ազդակիր Արծվանիկ բնակավայրում:

Մասնագետներն ասում են՝ արյուն հանձնելը նաև առողջարար է օրգանիզմի համար. այն երիտասարդացնում է: Երկրորդ դրական կողմն այն է, որ այսպես անվճար արյան հետազոտություն անցնելու հնարավորություն ես ստանում: Կայանի փորձառու մասնագետները տեղում արագ կազմակերպում են գործընթացը:

«Առաջնակի դոնորից նախ արյան նմուշ ենք վերցնում, հետազոտում և միայն բավարար պատասխանների դեպքում մարդը կարող է դոնոր դառնալ», — ասում է ավագ բուժքույր տիկին Ադելինան:

Մարզային միակ բաժանմունքի վարիչ Արթուր Առաքելյանը հորդորում է միշտ մասնակցել դոնորության ակցիաներին՝ լինի դա վճարովի, թե անհատույց: Պահանջարկը մշտապես զգացվում է: Հատկապես 44-օրյա պատերազմի օրերին կայանը իր վրա էր վերցրել առաջնագծի սպասարկման ամբողջ ծանրաբեռնվածությունը:

Ակցիայի ավարտին Արթուր Առաքելյանը դոնորներին հանձնեց քաղցկեղով հիվանդ երեխաների կողմից շնորհակալական բացիկները, ովքեր ապաքինվել են դոնորական արյան շնորհիվ: Սա ևս կարող է ոգևորիչ ազդակ լինել մարդկանց համար և ի վերջո դոնոր դառնալու ցանկություն առաջացնել:

Հեղ.՝ Հերմինե Միքայելյան
Լուսանկարիչ՝ Նվեր Զելյա



Սքանավորիր QR կոդը, դիտի՛ր ակցիայի վերաբերյալ տեսանյութը

Օգտակար մթերքներ սեզոնի համար

Աշունը տարվա այն եղանակն է, երբ բնությունը ոչ միայն հիացնում է իր բազմերանգությամբ, այլև մեզ նվիրում է առողջության ամրապնդման լավագույն միջոցները՝ հարուստ և սննդարար մթերքներ: Այս սեզոնին մեր սեղանները լցվում են վիտամիններով և հակաօքսիդանտներով լի բարիքներով, որոնք օգնում են օրգանիզմին հարմարվել եղանակային փոփոխություններին և կանխել սեզոնային հիվանդությունները:

Խնձոր՝ վիտամինների բնական պահեստ

Խնձորը համարվում է աշնան խորհրդանիշը: Այն հարուստ է վիտամին C-ով, մանրաթելերով և հակաօքսիդանտներով, որոնք օգնում են պահպանել սրտի առողջությունը և կարգավորել մարսողությունը: Օրական մեկ խնձորն իսկապես կարող է «հեռու պահել բժշկից»:

Դդում՝ իմունիտետի բարելավմը

Դդումը պարունակում է բետա-կարոտին, որը մարմնում փոխակերպվում է վիտամին A-ի՝ աչքերի և մաշկի առողջության համար կարևոր նյութ: Դդմի սերմերը հարուստ են ցինկով և մագնեզիումով, որոնք նպաստում են իմունային համակարգի ամրապնդմանը:

Բրոկոլի և կաղամբ՝ սեզոնային պաշտպանություն վիրուսներից

Խաչածաղկավոր բանջարեղենները՝ բրոկոլին, կաղամբը, ծաղկակաղամբը, հարուստ են վիտամին C-ով և ֆոլաթթվով: Դրանք օգնում են օրգանիզմին դիմակայել սառը եղանակին և պահպանել էներգիան:

Ընկույզներ և չրեր՝ բնական էներգիայի աղբյուր

Աշնանը օրգանիզմը պահանջում է ավելի շատ էներգիա: Ընկույզները, նուշը, չամիչը և չրերը ապահովում են օմեգա-3 ճարպաթթուներ, երկաթ և բուսական սպիտակուցներ, որոնք բարելավում են ուղեղի աշխատանքը և բարձրացնում դիմադրողականությունը:

Մեղր և փաթ թեյ՝ բնական հակաբորբոքիչ կոյգ

Աշնան սառը երեկոներին մեղրով տաք թեյը ոչ միայն հաճելի է, այլև օգտակար. այն նվազեցնում է բորբոքումները և օգնում է խուսափել մրսածությունից: Աշունը հրաշալի ժամանակ է՝ վերանայել սննդակարգը և նախապատրաստել օրգանիզմը ձմռան սեզոնին: Սեզոնային մթերքների ճիշտ ընտրությունը ոչ միայն ապահովում է առողջություն, այլև տրամադրություն՝ լի ուժով ու կյանքի գույներով:

ՎԻՐՏՈՒԱԼ և ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (VR/AR)



Հանքարդյունաբերության մեջ

Վիրտուալ իրականությունը (VR) և ընդլայնված իրականությունը (AR) վերջին տարիներին մեծապես փոխել են հանքարդյունաբերության ոլորտը՝ բարելավելով անվտանգությունը, օպերատիվությունը, վերապատրաստումներն ու մասնագիտական կրթությունը՝ դրանք դարձնելով առավել հասանելի:

Այս տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ստեղծել վիրտուալ միջավայրեր, որտեղ կարելի է մոդելավորել հանքավայրերի կառուցվածքը, վերլուծել ռիսկերը և կատարել վերապատրաստումներ՝ առանց իրական ռիսկերի:

Օրինակներ աշխարհի հանքավայրերից.

• **Ավստրալիա** – 3D Walkabout-ը առաջարկում է AR լուծումներ հեռավար մոնիտորինգի համար, օգնելով երկրաբաններին պլանավորել հանքավայրերի շահագործումը:

• **ԱՄՆ (Վիրջինիա)** – AR ուսուցման մոդուլներ, հարմարեցված ծանր տեխնիկայի վարորդների համար՝ նվազեցնելու վթարների հավանականությունը:

• **Կանադա (Քվեբեկ)** – Goldcorp օգտագործում է VR վերապատրաստումներ՝ վթարային իրավիճակները անվտանգ փորձելու համար. անվտանգության միջադեպերը 30%-ով նվազել են:

• **Գերմանիա** – RAG ընկերությունը EMIMSAR VR համակարգով բարելավում է սարքավորումների վերանորոգման պլանավորումը և արդյունավետությունը:

Օգտակարություն

• Անվտանգություն – վերապատրաստում ռիսկային իրավիճակներում՝ առանց իրական վտանգի:

• Արդյունավետություն – իրական ժամանակի տվյալներով արագ որոշումների կայացում:

• Կրթություն – հնարավոր է սովորել և սխալներ անել՝ առանց վտանգի:

• Խնայողություն – նվազեցնում է սպասարկման և վերանորոգման ծախսերը:

Ապագա, հեռանկարներ

Հանքարդյունաբերության ոլորտում VR/AR տեխնոլոգիաների կիրառումը շարունակաբար ընդլայնվում է: Այս տեխնոլոգիաների ինտեգրումը արհեստական բանականությանը (AI) և մեծ տվյալների բազային(big data base)՝ նպաստում է ավելի խելացի և ինքնավար հանքավայրերի ստեղծմանը:

Այս տեխնոլոգիաների շարունակական զարգացումը և կիրառումը կարող են էականորեն փոխել ոլորտի աշխատանքային մեթոդները, խթանել զարգացումը:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԻՑ

Հայաստանում ամեն տարի աշնանային և ձմեռային ամիսներին իրականացվում են գրիպի դեմ պատվաստումներ՝ իմունականխարգելման ազգային ծրագրի շրջանակում:

Մասնագետներն ընդգծում են, որ պատվաստումներն օգնում են կանխել սուր շնչառական վարակների բարդ ու անցանկալի ելքերը: Դրանք նպաստում են, որ վարակվելու պարագայում հիվանդությունը ունենա թեթև ընթացք:

Պատվաստումների նպատակն է՝

- կանխել սեզոնային գրիպի տարածումը,
- նվազեցնել բարդությունների, հոսպիտալացման և մահվան դեպքերի ռիսկը,
- պաշտպանել հատկապես բարձր ռիսկային խմբերին՝
  - առողջապահական աշխատողներին,
  - տարեցներին (≥65 տարեկան),
  - քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց,
  - հղիներին, երեխաներին

Պատվաստումները անվճար են, իրականացվում են պետպատվերի շրջանակում՝ Հայաստանի բոլոր բժշկական կենտրոններում և պոլիկլինիկաներում:

Համարի լուսանկարները՝
Նվեր Զելյայի

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
2015 ԹՎԱԿԱՆԻՑ

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ,
ք. Քաջարան,
Լեռնագործների 18
www.zcmc.am
press@zcmc.am